



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 11 Օգոստոս, 2025

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալսս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Ինձ օգնութիւն ի տեառնէ Աստուծոյ իարայելին եկեացէ:

Ձի նա է տէր տերանց եւ Աստուած յաւիտենից.

Ինձ օգնութիւն ի տեառնէ Աստուծոյ իարայելին եկեացէ:

ԱՊՈԹՔ

Օգնէ մեզի, Տէ՛ր, օգնէ մեզի, ով մեր փրկիչ Աստուածը, Քու մեծ անունիդ փառաւորութեան համար: Տէ՛ր, փրկէ մեզ եւ բաւէ մեր մեղ-քերը, Քու սուրբ անունիդ համար: Սուրբ եւ պատուական խաչիդ հովա-նիին տակ պարսպուած եւ խաղաղութեան մէջ պահէ Քեզի ապաւինած եւ Քեզի յուսացող ժողովուրդդ: Փրկէ մեզ տեսանելի եւ անտեսանելի թշնամիներէն: Արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու Քեզ, Հօրդ եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուր: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարե-խօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

**Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ բո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ բո արարածոց եւ ինձ բազմամեղիս:**

ՍԱՂՄՈՍ 83

ԹՇՆԱՄԻ ԱԶԳԵՐՈՒՆ ԴԷՄ ԱՍՏՈՒԾՄԷ ԽՆԴՐԱՆՔ

Ով Աստուած, լուռ մի մնար,
խօսէ, ով Աստուած, եւ ձեռնածալ մի կեմար:
Տես, թշնամիներդ ինչպէս կը գոռան,
քեզ ատողները գլուխ բարձրացուցեր են:
Ժողովուրդիդ դէմ խորամանկ հնարքներ կը խորհին,
դաւ կը լարեն անոնց դէմ՝ որ դուն
բու պահպանութեանդ տակ առած ես:
Կ'ըսեն՝ »Եկէ՛ք, ազգերու շարքէն ջնջենք զանոնք,
թող Իսրայէլ անունը չիշուի այսուհետեւ«:
Միասնաբար դաւ կը նիւթեն, եւ քեզի դէմ կը դաշնակցին
Եդոմի բանակն ու Իսմայէլացիները,
Մոաբացիները եւ Հագարացիները,
Գեբալցիները եւ Ամմոնացիները,
Ամալեկցիները, Փղշտացիները եւ Տիրոսի բնակիչները,
որոնց միացեր է նաեւ Ասորեստանը,
իբրեւ զինակից Ղովտի սերունդներուն:
Ով Տէր, անոնց ըրէ այն՝ ինչ որ ըրիր Մադիանացիներուն,
կամ ինչ որ Սիսարային եւ Եաքինին ըրիր՝ Կիշոն հեղեղատին մօտ,
որոնք կոտորուեցան Դորի ակունքին բով,
եւ անոնց մարմինները հողին համար աղբ դարձան:
Անոնց մեծամեծներուն ըրէ այն՝ ինչ որ ըրիր Օրէբին ու Զէէրին.
եւ ինչպէս ըրիր Զեբաօն ու Ցալմուննային՝
այնպէս ըրէ անոնց բոլոր իշխաններուն, որոնք ըսին.-
»Եկէ՛ք տիրանանք այն երկրին, որ Աստուծոյ կը պատկանի«:
Ով Աստուածս, զանոնք մրրիկէն բշուած փռչի վերածէ,
հովէն բշուած յարդի վերածէ:
Ինչպէս կրակը կ'այրէ անտառը, կամ ինչպէս բոցը կը խանձէ լեռները,
այնպէս զանոնք տարտղնէ մրրիկովդ,
փոթորիկովդ սարսափի մատնէ զանոնք:
Ամօթով ծածկէ անոնց երեսը,
որպէսզի ճանչնան կարողութիւնդ, ով Տէր:
Թող ամչնան ու սարսափի մատնուին յաւիտեանայէս,
եւ ամօթալից՝ կորսուին:
Թող հասկնան թէ միայն դուն, որուն անուն Տէր է,
դուն՝ Բարձրեալդ ես որ կը տիրես ամբողջ աշխարհին:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺՈՐ



ՍԱՂՄՈՍ 83

ԹՇՆԱՍԻ ԱԶԳԵՐՈՒՄՆ ԴԷՍ ԱՍՏՈՒԾՄԷ ԽՆԴՐԱՆՔ

Այսօրուան Սաղմոսը այնքան այժմեական է, երբ կ'ապրինք այնպիսի ժամանակահատվածի մը մէջ, ուր մարդկութեան նկարմամբ անարդարութիւն, կեանքեր կը խլուին, երեխաներ կը սպանուին, սովամահ մանուկներ, եւ ամբողջ աշխարհը ի տես այդ բոլորին պարզապէս խօսքի սահմաններու մէջ կը փորձեն իրենք զիրենք արտայայտել: Ահա այսպիսի կացութեան մը դիմաց, Ասաֆ նոյն վիճակի մէջ, խնդրանք է որ կը ներկայացնէ Աստուծոյ, թէ արդեօք ինչո՞ւ լուռ կը մնայ, ու մանաւանդ՝ ձեռնածալ: Այսօր ալ նոյնն է պարագան կարծէք, ուր կը սկսինք մտածելու, թէ իրօք ո՞ր է Աստուած: Ինչո՞ւ չի միջամտեր: Ասաֆ իր այս խնդրանքով կը ներկայացնէ, թէ ինչպէս Աստուծոյ թշնամիները, կը գոռան, գլուխ կը բարձրացնեն, Աստուծոյ ժողովուրդին դէմ խորամանկ հնարքներ կը խորհին, ու մանաւանդ՝ կը մտածեն թէ ինչ ընեն Իսրայէլ անունը բնաջնջելու համար: Նախ, Ասաֆ կը ներկայացնէ, թէ այդ թշնամիները Աստուծոյ թշնամիներն են, եւ ինչ որ կը մտածեն, ծրագրեն ու կը խորհին Աստուծոյ ժողովուրդին դէմ: Իսկ այսպէս, Իսրայէլ արտայայտութիւնը Աստուծոյ ժողովուրդին փրութեամբ անունն էր: Իսրայէլ անունը փրութեամբ Յակոբին, եւ Յակոբէն սերած սերունդները ճանչցուեցան այդ անունով:

Ասաֆ կը նշէ այն բոլոր ցեղերն ու ցեղախումբերը որոնք կը դաշնակցին, եւ որոնց միացեր է Ասորեստանը, Աստուծոյ դէմ: Ասաֆ կը խնդրէ, որ Աստուած ընէ, այն ինչ որ ըրած էր անցեալին նոյն փառքի ցեղերուն, որոնք արեւօք անոնք ալ այդպիսի ծրագիրներ մշակած էին: Տակաւին, ոչ թէ միայն Աստուծոյ ժողովուրդին դէմ է դաւը, այլ նաեւ ծրագիր կը մշակեն Աստուծոյ երկիրն ալ գրաւելու եւ անոր փրանալու: Այն ինչ որ ըրիր անցեալին հիմա ալ ըրէ կ'ըսէ Ասաֆ, որպէսզի ամօթով մնան, սարսափի մարմնուին, ու ճանչնան Տիրոջ կարողութիւնը: Ու մանաւանդ՝ հասկնան թէ միայն Աստուած Ինքն է, որուն անունը Տէր է, որ կը փրէ ամբողջ աշխարհին: Վերջին այս փողերը կու գայ յիշեցնելու թէ այդ ցեղերը, ցեղախումբերը, կամ այսօրուան հասկացողութեամբ պետութիւններն ու քաղաքներն իրենք իրենք կը կարծեն թէ իրենք են փրէն ու փրականը երկրին, կամ աշխարհին, մոռնալով, որ անոնք ուրիշ բան չեն եթէ ոչ պարզ, սովորական մահկանացուներ: Պոռթկում մը Ասաֆի կողմէ, որ այսօրուան իրականութեան մէկ դրսեւորումն է: Իսկ թէ այս պոռթկումին դիմաց, ի պատասխան այս պոռթկումին, թէ Աստուած ի՞նչպէս կամ ե՞րբ կը պատասխանէ: Սաղմոսներուն մէջ կը կարդանք, «Համբերութեամբ սպասեցի Տիրոջ, եւ անիկա եկաւ ինձի օգնութեան»: